

## ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ \*)

Ամենահին ժամանակներից, երբ միտքը տիեզերքի մէջ աբողջութիւն, միութիւն որոնելու և ըմբռնելու անկարող էր, երբ երևոյթների բազմազանութեան ընդհանուր հիմունքը նրանից խուսափում էր, և բնութիւնը նրան լի էր թւում իրարից անկախ, ինքնավար գոբութիւններով, կրօններն առաջ եկան, որպէս այդ մութ կարողութիւնների երկրաւոր թարգման: Մարդը իր անձար խեղճութեան մէջ փարեց գերբնականին, և կրօնը խոստացաւ հեշտացնել նրա ծանր ճակատագիրը, դարմաններ փնտրել նրա ծանր ցաւերին:

Եւ արդարև՝ նախնական ժամանակներում կրօնը ամեն ինչ է, նա բոլոր գիտութիւնն է, բոլոր իմաստութիւնը, երկնային և երկրաւոր բոլոր բարիքների մատակարարողը: Նա ոչ միայն հանդերձեալ կեանքի ճանապարհը գիտէ, այլև բժշկում է մարմնաւոր ցաւերը: Քուրմը բժիշկ է նաև: Բայց ամենից աւելի կրօններին զբաղեցնողը եղել է մահը, որպէս մի պրոբլեմ, որից դողացել է մարդը և ելք փնտրել: Եւ այն կորած ժամանակներից մինչև մեր օրերը մահուան և նրա հետ կապուած հանդերձեալ կեանքի գաղափարը ենթարկուել է ահագին էվոլյուցիայի: Նախնական ժողովուրդների մէջ ամենից աւելի տարածուած է «անիմիզմը», այսինքն մահից յետոյ մարմնով կենդանի մնալու գաղափարը, «որը հիմք է թէ՛ վայրենի ժողովուրդների և թէ՛ քաղաքակրթութեանների կրօնների փիլիսոփայութեան», ասում է Տայլորը: Ըստ այս միամիտ հաւատալիքի՝ մեռելը շարունակում է ապրել համարեա կենդանի մարդկանց պէս՝ ունենալով մօտաւորապէս նոյն կարիքները և կեանքի նոյն եղանակը: Այս է պատճառը, որ վայրենիները այնքան իրեր են թաղում մեռելների հետ, ինչպէս՝ զէնքեր, ուտելիղէն-

\*) Տես «Մուրճ» № 10.

ներ, գործիքն—երնախապաշարմունքներ, որոնք ապրում են դեռ նոյնիսկ շատ քաղաքակրթուած քրիստոնեայ ժողովուրդների մէջ, և որոնք արտայայտում են գերեզմանների և առհասարակ նախնեաց կուլտով: «Ինչպիսի անդրշիրմեան կեանքը տածած հաւատը, ասում է Մեհնիկով, որ այնպէս տարածուած է ամբողջ աշխարհում, անշուշտ հիմունք է ծառայել բոլոր կրօններին»: Չը կայ կրօն, որ հանդերձեալ կեանքի գաղափարը քարոզած չը լինի: Հակառակ մինչև այժմ եղած կարծիքի՝ Մեհնիկով պնդում է, որ մովսիսականութիւնն էլ միւս կրօնների հաւասար քարոզել է երկրորդ գոյութիւնը և նա օրինակներով Աստուածաշնչից և Թալմուդից՝ հաստատում է իր ասածը: Նոյնն է պնդում նաև՝ բուդդայականութեան մասին:

Ամբողջ դարերի շարք հարկաւոր եղաւ սակայն, մինչև մարդը կարողացաւ մարմնի անմահութեան գաղափարը թողնել ֆիզիկական ակնյայտ անկարելիութեան շնորհիւ և յարել հոգու անմահութեան: Սակայն ինչպէս որ գաղափարական որեէ նոր հոսանք երբէք չի կարողանում ամբողջապէս բաժանուել նախնեաց ժամանակներից, այսպէս էլ քրիստոնէութիւնը պահեց բազմաթիւ սովորութիւններ, ծէսեր, հաւատալիքներ ու նախապաշարմունքներ, որոնք յատուկ էին նախնական կրօններին:

Կրօնը՝ ինչպէս տեսանք՝ երբէք միայն հանդերձեալ կեանքով չի զբաղուել, այլ աշխատել է աշխարհային կեանքը կարգի դնել և օգնել ապրող մարդուն: Այսպէս բազմաթիւ հիւանդութիւնները, մանաւանդ մեծամեծ վարակիչ խտտերը, ինչպէս ժանտախտը և ուրիշները, բոլոր ժամանակներում եղել են բացառապէս կրօնից և հաւատից կախուած երևոյթներ: Մարդիկ աշխատել են մեծամեծ կրօնական թափոռներով և զոհաբերութիւններով հալածել չարիքը և երկնքի գթութեանն արժանանալ:

Սեռական կեանքը մասնաւորապէս համարեա բոլոր կրօնների հոգացողութեան առարկան է եղել, որպէս մի կենսական երևոյթ, որից կախուած է ժողովուրդների բարեկեցութիւնն ու դժբաղդութիւնը: Մարդու առօրեայ մասնաւոր կեանքն ևս շատ անգամ կախուած ու կարգաւորուած է եղել կրօնական ծէսերով: Մահմէդականների լուացումները, ծոմերը և այլն:

Ահա մօտաւորապէս ինչ է արել կրօնը մարդկային ճակատագիրը թեթեւացնելու համար: Այժմ տեսնենք ի՞նչ է արել փիլիսոփայութիւնը:

Փիլիսոփայութիւնն էլ իր կարգին, սկզբում կրօնի հետ

միաժամանակ, երբ նրանք անբաժան էին (բուրգայականութիւն), յետոյ անկախ զբաղուել է միշտ հոգու անմահութեան և առհասարակ հանդերձեալ կեանքի պրոբլեմներով: Յունական փիլիսոփաներից ըստ Պլատոնի առաջին անգամ այդ ինդրով զբաղուում է Սոկրատ: Չը նայելով որ Սոկրատի ամբողջ փիլիսոփայութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմաստուն խրատներ բարուք կենցաղի համար, մի տեսակ դասական մորալ՝, այնուամենայնիւ տեղ-տեղ հոգու անմահութեան մասին նա վճռական համոզումն է յայտնում, ինչպէս օրինակ՝ մահից առաջ իր աշակերտների հետ ունեցած խօսակցութեան մէջ. «Ես չեմ ցաւում, որ պիտի մեռնեմ, յուսալով որ մարդկանց համար այս կեանքից յետոյ մի բան կայ և որ ըստ հին ասացուածքի՝ բարիներն աւելի լա՛ւ վիճակ կ'ունենան, քան չարերը»:

Պլատոն իր ուսուցչից աւելի վճռական է հոգու անմահութեան հարցում. նրա ամբողջ փիլիսոփայութիւնը, բոլոր լոգիկան անդադար դառնում է այդ խոշոր պրոբլեմի շուրջը: Արիստոտել ընդունում էր հոգու մի մասի անմահութիւնը: Նոյն գաղափարը ձեռք առան ստոիկները: Նրանցից նշանաւորները՝ ինչպէս Սենեկ և Մարկոս Աւրելիոս, մահուան անգորութեան և հոգու անմահութեան մասին շատ որոշ կարծիքներ ունեն յայտնած: Նրանց համար այն ամենը, ինչ կատարում է համաձայն բնութեան օրէնքների, բարիք է և պէտք է ընդունել անտրբտունջ որպէս մի շնորհ: «Չեռքը կամ ոտքերը, ասում է Մարկոս Աւրելիոս, բնութեան օրէնքների դէմ չեն գործում, երբ կատարում են իրանց դերը: Նոյնպէս մարդը բնութեան օրէնքների դէմ չի գործում, քանի կատարում է իր մարդկային պաշտօնը: Եւ ինչ որ բնութեան դէմ չէ, նա չարիք չի կարող լինել մարդու համար»: Մի ուրիշ տեղ. «Մի ատիւր մահը, այլ ընդունի՛ր այն հնազանդութեամբ, որպէս բնութեան կամքը: Ի՞նչ ասել է մահկութիւնից երիտասարդութեան անցնել, հասակ աճնել, մեծանալ, ծերանալ: Ի՞նչ ասել է ատամներ ունենալ, սպա սպիտակ մազ ու միրուք, ունենալ զաւակներ, արգանդում կրել կամ աշխարհ. բերել, այս և բոլոր միւս գործերը բնութեան, որոնցից իւրաքանչիւրը իր ժամանակն ունի: Մեր կազմալուծուելու գործողութիւնը պատկանում է նոյն կարգին: Հետևապէս իմաստուն մարդը չը պէտք է ատի մահը, ո՛չ գարշանք զգայ և ո՛չ քամահրի, այլ սպասի նրան, որպէս բնութեան գործերից մէկը»:

Երկու մեծ ստոիկներն էլ, և սա ուշադրութեան արժանի երևոյթ է, չը նայելով իրանց հաւատին հանդերձեալ կեանքի վերաբերմամբ, այնուամենայնիւ վերջիվերջոյ յանգում են զե-

բազմոյն, ծայրայեղ հնազանդութեան մահուան առաջ: Տխրութեան, ցաւի մի խորունկ շեշտ կայ այս անխուսափելի հնազանդութեան մէջ, ուր խմաստունն ու փիլիսոփան կարծես մատնում է մարդը, նա, որ երբէք անտարբեր չի եղել դէպի մահը: «Այո, ասում է Սենեկ, ամեն ինչ, որ գոյութիւն ունի, կորչելու է, ոչնչութիւն է սպասում այս բոլոր արարածներին»: «Ամեն մի օր, ամեն մի ժամ ցոյց է տալիս մարդուն իր ոչնչութիւնը: Միշտ մի թարմ դաս գալիս է նրան ասելու իր անցողականութիւնը, որ նա մոռանում է, և այն յաւիտենականութիւնից, որ նա երազում է, յետ է մղում նրա միտքը դէպի մահը»:

Ահա արդէն խիստ որոշ՝ յաւիտենականութեան գաղափարի կողքին ցցուած մահը, անխուսափելի ու անողորմ ոչնչացնող օր-աւուր, ժամաժամ և անդառնալի: Յոռետես փիլիսոփայութեան առաջին շեշտն է այդ, որ թէև անհամարձակ, անկերպարան, բայց արդէն հնչում է որպէս անյուսութեան մի տղաղակ, որ հնազանդութիւն է միայն քարոզում:

Ստոիկները միջին դարերի քրիստոնեայ փիլիսոփաները ոչինչ չեն աւելացնում, բացի այն, որ աշխատում են Արիստոտելի օգնութեամբ, աշխարհիկ փաստերով ու լոգիկայով քրիստոնէական դոգման և գերբնական յայտնութիւնները հաստատել:

Նոր ժամանակներում, Դեկարտից յետոյ փիլիսոփայութիւնը դեռ երկար ժամանակ քաջքշում է նոյն մետաֆիզիկական հարցերը. Սպինոզան յարում է պանթէիզմին, անմահ և միակ էութեանը, Կանտը մի հանճարեղ փորձ է անում մարդկային գիտակցութեան և խզճի վրայ հաստատել հանդերձեալ կեանքը և նրան յարակից մետաֆիզիկական ամբողջութիւնը: Բոլոր մինչև այդ ժամանակ եղած փորձերից սա ամենահմուտ, ամենահամոզիչ փորձն էր ըստ երևոյթին, որ Կանտի հսկայ հանճարը ձեռք անաւ, բայց այնուամենայնիւ արդէն իր աշակերտներից Փիխտէն գտաւ, որ «հոգու անմահութիւնը չի կարող բացատրուել բնական հանգամանքներով և որ նա բնութիւնից բարձր է»: Հեգելը, Կանտի միւս աշակերտը դառնում է դէպի Սպինոզան և ընդունում է հոգու լուծումը տիեզերական և բացարձակ էակի մէջ: Սա արդէն վերագրած էր դէպի պանթէիզմը: Մետաֆիզիկայի վերջին փորձերը այսպիսով դարձան Սիզիֆի աշխատանքներ, առանց որոշ, կոնկրետ հետեանքների յանգնելու:

Մետաֆիզիկայի և առհասարակ կեանքի և մահուան գերագոյն պրոբլեմները լուծելու փիլիսոփայութեան ցոյց տուած անկարո-

դուժիւնն էր, որ ծնունդ տուեց անցեալ դարում՝ ժամանակակից յոռետեսութեան: Միտքը ըմբոստ այս անկարողութեան հանդէպ՝ փորձեց նոր բացատրութիւններ գտնել, նոր ճանապարհներ հարթել դէպի անյայտը և վերջիվերջոյ ծայրայեղութիւնից իջաւ մինչև բացարձակ մատերիալիզմը:

Յոռետես փիլիսոփայութեան առաջին քարոզիչները եղան լիբրիկ բանաստեղծները: Դեռ անցեալ դարի սկզբին լորդ Բայրընը գրում էր.

«Հաշիւր քո այն օրերը, որ անց ես կացրել ուրախութեամբ և առանց տանջանքի, և կը տեսնես, ինչ և եղած լինիս, աւելի լաւ կը լինէր բնաւ չը լինել»: Բայրընին հետեւեց ոչ պակաս յոռետես ու մեղանխորիկ Լէոպոլդին: Այստեղից մինչև Շոպենհաուեր և Հարտման էլ հեռու չէր: Բանաստեղծութիւնը և փիլիսոփայութիւնը միշտ քոյրեր են եղել:

Անցեալ 19-րդ դարի կէսից Շոպենհաուեր հնդկական կըրճանքի ազդեցութեան տակ առաջին անգամ փիլիսոփայական սիստեմի տակ դրեց անխուսափելի դարձած յոռետեսութիւնը, որ արդէն մթնոլորտի մէջ էր: Նրա կարծիքով մեր գոյութիւնը մի սխալ է և միանգամայն աւելորդ: «Երբ մարդ երևակայում է, որքան այդ հնար է, ասում է Շոպենհաուեր, խեղճութեան, թշուառութեան և ցաւերի այն քանակութիւնը, որ ամեն օր արեգակը լուսաւորում է իր ընթացքում, հասկանալի կը դառնայ, որ շատ աւելի լաւ կը լինէր, եթէ երկրի վրայ էլ նա առաջ բերէր նոյնքան նուազ կեանքի ֆենոմեններ, որքան լուսնի վրայ, և որ երկրի մակերեսին էլ այնպէս քարանար, որպէս լուսնինը: Մեր գոյութիւնը կարելի է համարել մի էպիգոր, որ անօգուտ տեղը խոռվում է ոչնչութեան երջանիկ խաղաղութիւնը»: Ըստ Շոպենհաուերի՝ հաճոյքը, վայելքը միշտ բացասական են, մինչդեռ տանջանքը միշտ դրական: «Միայն մի հատ բնածին սխալ կայ, շարունակում է նա, և դա այն է, որ մարդը կարծում է, թէ ինքը աշխարհ է եկել երջանկութեան համար»: «Աւելի բնական կը լինէր կեանքի նպատակը տեսնել ցաւերի, քան երջանկութեան մէջ»: «Մարդկային ամբողջ գոյութիւնը ցոյց է տալիս, որ իր իսկական նպատակը տանջանքն է: Գեանքը խորապէս թաղուած է դժբաղդութեան մէջ և չի կարող նրանից ազատուել: Աշխարհ ենք գալիս արցունքով, մեր կեանքի ընթացքը միշտ տրագիկ է, և վախճանը աւելի ցաւոտ: Անհնարին է այս բոլորի մէջ չը տեսնել կանխամտածութիւն»: «Մահը պէտք է նկատուի որպէս կեանքի իսկական նպատակ, և այն վայրկենին, երբ նա գալիս է, բերում է իր

հետ լուծումն այն բոլորի, ինչ պատրաստուած է կեանքի ընթացքում»:

Այս ընդհանուր մտայլ բացասութեան մէջ Շոպենհաուերի համար դրական միայն մի բան կայ, տիեզերական պրինցիպը, որ անմահ է: «Գիտակցութիւնը մեռնում է, ասում է նա, բայց այն պատճառը, որ ծնունդ է տուել այդ գիտակցութեանը, ապրում է: Կեանքը մարում է, բայց ոչ պրինցիպը կեանքի, որ արտայայտում է նրա մէջ»:

Մահուան բոլոր անյուսութիւնը ընդունելով հանդերձ, Շոպենհաուեր ստորիկները պէս քարոզում է ծայրայեղ հնազանդութիւն մահուան առաջ:

Շոպենհաուերին յաջորդեց նրա աշակերտ Հարտմանը, որ աւելի հեռու գնաց իր յոռետեսութեան մէջ: Ընդունելով, որ երջանկութիւնը չէ կեանքի նպատակը, Հարտման մեր ողորմելի կեանքի չնչին փայլը խլելու համար կարծես՝ իր փիլիսոփայական կրիտիկան ուղղեց սիրոյ դէմ: Նրա համար սէրը՝ ընտանեկան, ընկերական, ծնողական, որդիական, սեռական ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կատարեալ իլլիւզիա, որ պէտք է ոչնչացնել: «Սէրը, ասում է նա, մարդկանց տալիս է միշտ աւելի ցաւեր, քան հաճոյք... հետևապէս բանականութիւնը պէտք է խորհուրդ տար միանգամայն հրաժարուել սիրուց... ոչնչացնելով սեռական ցանկութիւնը»:

Մարդկային մտքի բոլոր փորձերն այս աշխարհից դուրս մի այլ աշխարհում երջանկութիւն և յաւիտենականութիւն ընդգրկելու՝ ըստ Հարտմանի՝ մեր խեղճութիւնը մխիթարող անօգուտ իլլիւզիաներ են: Յուսախաբուած այդ կողմից, մարդն սկսել է հաւատալ, որ իր երջանկութիւնը ապագան է պահում, և որ զալիք մարդկութիւնը շնորհիւ յառաջագիմութեան, քաղաքակրթութեան՝ աւելի երջանիկ կը լինի. բայց սա էլ մի սրխալ է, ասում է Հարտման. «Մարդկութիւնը թող յառաջագիմի, որքան կամենայ, երբէք նա չը պիտի կարողանայ ոչ միայն վերացնել իսպառ, այլ նոյնիսկ նուազեցնել այն ցաւերը, որոնցով սաստապում է, որպիսիք են—հիւանդութիւն, ծերութիւն, ուրիշների կամքից և իրաւունքից կախումն, խեղճութիւն, դժգոհութիւն: Որքան կամենան, թող գտնեն դեղեր զանազան հիւանդութիւնների դէմ, սրանց թիւը, մանաւանդ քրոնիկական հիւանդութիւնների որոնք այնպէս ցաւոտ են, կը մեծանայ շարունակ բժշկութիւնից աւելի մեծ համեմատութեամբ: Միշտ մարդկութեան միայն մի փոքր մասը կը լինի կենսուրախ երիտասարդ, իսկ մնացածը է և կը մնայ դաժան ծերութեանը»:

Բաղաքակրթութիւնը մարդկային երջանկութեան տեսա-

կէտից այն աստիճան անօգուտ է ըստ Հարտմանի, որ նա չի տատանուում հերքել այն: Նրա կարծիքով նախնական ժողովուրդներն աւելի երջանիկ են, քան քաղաքակիրթ ազգերը, որ «աղքատ, անկիրթ, կոշտ դասակարգերն աւելի երջանիկ են, քան հարուստ, ազնւական, կրթուած մարդիկ, որ յիմարները խելօքներից բաղաւոր են, և որ ընդհանրապէս որևէ արարած նոյնքան աւելի երջանիկ է, որքան իր ներվային սիստեմն անզգայ է»:

Տարաբաղաբար ըստ Հարտմանի այս ցաւերով լի աշխարհից, այս անմիտ կեանքից ազատուել էլ չի կարելի: Անհատական ինքնասպանութիւնը, կամ սեռական կեանքից հրաժարուելը չի կարող օգնել, որովհետև, ասում է Հարտման, «եթէ մարդկութիւնը սեռական կեանքից հրաժարուելով ոչնչանար, այս ողորմելի տիեզերքը այնուամենայնիւ կը շարունակէր իր գոյութիւնը, և Անգիտակիցը (Inconscient) առաջին առիթից կ'օգտուէր ստեղծելու մի նոր մարդ, մի այլ նման տիպ մարդկային»:

Հարտմանի եռանդուն հետևող եղաւ Մալենդեր, որին իր յոռետես ծայրայեղութիւնը գերեզման մղեց. այժմ էլ յայտնի դրամատուրգ Մետերլինիկ իր համարեա բոլոր երկերի մէջ մահուան անյուսութիւնը և մարդկային ճակատագրին անխուսափելի կերպով շարկապուած-մեծ տառապանքն է երգում: Եւ վերջապէս հանճարեղ Գիւիօն առանց բողոքի չի կարողանում խօսել մահուան մասին. այս վախճանի հանդէպ «միայն ցաւ չէ, որ մարդ գգում է, այլ և զայրոյթ՝ բնութեան անարդարութեան դէմ»: Բայց նա էլ վերջիվերջոյ միակ հնարը գտնում է հնազանդութեան մէջ. «Որովհետև ոչ մի տեղից օգնութիւն չը կայ անողոքի (մահուան) դէմ, ոչ էլ զթուլութիւն այն բանի դէմ, ինչ որ համապատասխան է ամբողջին և մեր մտքին, ուրիշ ելք չի մնում, բացի հնազանդութիւնից»:

Մենք տեսանք, թէ ողորմելի մարդու մխիթարութեան համար ինչ են ասում կրօնները. անա և փիլիսոփայութեան վերջին խօսքը,—ցաւերից ու տառապանքներից փրկուելու հրնար չը կայ, մահն անխուսափելի է՝ կարապետ ունենալով ծերութիւնն ու հիւանդութիւնները, մահից յետոյ իշխողը ոչնչութիւնն է, իսկ գերագոյն մխիթարութիւն պէտք է փնտրել միայն ծայրայեղ հնազանդութեան մէջ:

Իսկ ի՞նչ է ասում գիտութիւնը:

Փիլիսոփայական սիստեմները վրայ ես դիտմամբ մի փոքրը աւելի երկար կանգ առայ, որովհետև իւրաքանչիւր ժամանակում իրապէս փիլիսոփայական միտքն, է որ դեկավար է

հանդիսանում մարդկութեանը, որ ստեղծում է տիրող հոսանքներ և որոշում է յայտնի հասարակութեան բարոյական պատկերը: Էնցիկլոպեդիստերի խաղացած դերը Ֆրանսիական մեծ յեղափոխութեան մէջ յայտնի է:

Փիլիսոփայութիւնը կարելի է ասել մի մեծ աղբիւր է, որ կամաց-կամաց ծծուում, տարածուում է հասարակական խաւերի մէջ շնորհիւ գրականութեան և գեղարուեստի: Նայելով թէ ինչ է ներկայացնում որոշ էպոխայի տիրող փիլիսոփայութիւնը, մօտաւորապէս նոյն գաղափարներն են դաւանում նոյն ժամանակի ղեկավարիչ հասարակական խաւերը. XVIII-րդ դարը բուսսօեան և վոլտերեան էր. զգայասէր, մաքառող, բնութեան սիրահար, ծայրայեղ ազատութեան հետամուտ: Յաջորդ դարը, ինչպէս տեսանք բերած մի քանի օրինակներից, հիասթափուած յոռետես եղաւ: Այս հոսանքն էլ իր կարգին բռնեց հասարակական բոլոր խաւերը. գրականութիւնը և գեղարուեստը մտայլ խոհերի, մութ մտածումների աղբիւր դարձան:

Մտքի այս անդադարում յեղեղումների մէջ կրօններից՝ կրօն, փիլիսոփայական մէկ սիստեմից՝ միւսը, ո՞րն է գիտութեան դերը, ի՞նչ է արել նա, ինչի՞ք է ընդունակ: Ահա այս հարցերին պատասխանելու համար է, ինչպէս ասացի յօդուածիս սկզբում, որ Մեչնիկով ձեռնարկել է իր այս աշխատութեանը: Մինչև այժմ ասուածը, որ ես քաղուածօրէն և մասամբ ինքնուրոյն ձևով ներկայացրի, ընդհանուր փիլիսոփայական, բարոյական, կրօնական խնդիրներ են, որոնց մասին անթիւ հատորներ են գրուել, և որոնց վրայ հիմնուած՝ Մեչնիկով ներկայացնում է մարդկային մտքի անցեալը: Նրա գործի ամբողջ արժանիքը եզրակացութիւնների և իր բժշկական թէորիաների մէջ է, որ ես կ'աշխատեմ համառօտակի առաջ բերել:

Փորձական գիտութիւնը մարդկային մտքի արտադրութիւնների մէջ համեմատաբար շատ նոր է. գլխաւոր կրօնները և փիլիսոփայութիւնը արդէն 15, 20 դարերի կեսեր ունէին իրանց յետևում, երբ առաջին անգամ Բեկոն իր «novum organum»-ը գրեց և առաջին անգամ գիտական հետախուզութիւնների համար մեթոդ սահմանեց: Չը նայելով գիտութեան մանուկութեանը, այնուամենայնիւ չի կարելի ուրանալ, որ նրա մատուցած ծառայութիւնը տանջուող մարդկութեանը արդէն անագին է: Մեչնիկով գիտութիւն ասելով՝ իր աշխատութեան մէջ ինկատի ունի միայն բժշկականութիւնը, և իր մէջ բերած փաստերը վերաբերում են այդ ճիւղին:

Յոռետես փիլիսոփայութեան իբրև հիմունք միշտ եղել

են բազմաթիւ հիւանդութիւնները, մանաւանդ այն վարակիչ ախտերը, որոնք ինչպէս համատարած պատուհաս դարկուում են ժողովուրդների վրայ՝ մահու թշուառութիւն սփռելով ամեն կողմ:

Ես սակայն գիտութիւնը եթէ չի կարողացել այդ ախտերը, ինչպէս խոլերա, ժանտախտ, խապո ջնջել, բժշկել, գոնէ ճշտապէս որոշելով նրանց ինչ լինելը՝ կարողացել է բազմաթիւ հնարներ տալ նրանց դէմ կուելու, նրանցից ազատուելու: «Եթէ, ասում է Մեչնիկով, 1831 թւին բժշկութիւնը այսպէս լաւ ծանօթ լինէր խոլերային, ինչպէս այժմ, փիլիսոփայութիւնը բոլորովին ուրիշ պատկեր կ'ունենար: Փոխանակ այդ հիւանդութեան առաջ դողալու և խոյս տալու դէպի Ֆրանկֆուրտ՝ Շոպենհաուերը կարող էր հանգիստ կերպով շարունակել ապրել Բերլինում, իսկ Հեգելը կարիք չէր ունենայ ընդհատել իր իդէալիստ փիլիսոփայութիւնը այդ քաղաքի համալսարանում»: «Եւ այսպէս, այն վտանգը, որի մասին Շոպենհաուեր խօսում է որպէս հաւանական, պէտք է նկատել որպէս վերջնականապէս անգոր դարձած շնորհիւ փորձնական գիտութեան»:

Պատեորի գիւտերը, որոնք հնարաւոր դարձրին հասկանալ օրգանական մարմինների փթութեան իսկական պատճառը, մի անագին զուրկ տուին բժշկականութեանը և մասնաւորապէս վիրաբուժութեանը: Յայտնի է որ այժմ վիրաբուժութիւնը բազմաթիւ ծանր օպերացիաներ է կարողանում անել ոչ միայն փորի շրջանում, այլ նոյնիսկ սրտի վրայ: Թէ մինչև որ աստիճան խոշոր է վիրաբուժութեան արած յառաջադիմութիւնը, ապացուցանում են հետևեալ թւերը. Ղրիմի պատերազմի ժամանակ անգլիական զօրքի մահացութիւնը վէրքերից հասնում էր 15,21<sup>0</sup>/<sub>0</sub>, ֆրանսիական զօրքերինը 1859-60 թ.—17,369<sup>0</sup>/<sub>0</sub>, գերմանականինը՝ 1870-71—11,07<sup>0</sup>/<sub>0</sub>, մինչդեռ 1898 թ. իսպանո-ամերիկական պատերազմի ժամանակ վէրքերից մահացութիւնը հաւասար էր միայն 6,64<sup>0</sup>/<sub>0</sub>:

Որդանման աղիքի հիւանդութիւնը նոյնպէս անվտանգ պէտք է համարել շնորհիւ բժշկականութեան, որովհետև մերթ կարելի է լինում յաջողութեամբ օպերացիայի ենթարկել և մերթ էլ բժշկել առանց օպերացիայի:

Հապա Պատեորի միւս խոշոր գիւտը, որ հնար է տալիս պատուաստի միջոցով բազմաթիւ վարակիչ հիւանդութիւնների և մասնաւորապէս կատաղութեան առաջն առնելը՝ Որպիսի բարիք տառապող մարդկութեանը:

Հակադիֆտերիտային շիճուկը, որ ութ տարի է՝ ինչ գործածութեան մէջ է, ամենատեսակ փորձերից անցաւ և ապա-

ցուցեց իր բժշկող յատկութիւնը վերջնականապէս: Այդ սերու-  
մի գործածութեան շնորհիւ մահացութիւնն իշաւ 50—60%—ից  
մինչև 12—14%: Կարելի է հաշուել, թէ քանի-քանի մա-  
նուկներ են ազատոււմ այս միջոցով:

«Միրոթերապիան, այս բարերար գիւտը բազմաթիւ հի-  
ւանդութիւնների դէմ գործ դնելով՝ ստացուել է շատ քաջալի-  
բիչ հետեանք: Բայց որովհետև մենք անկարող ենք այստեղ  
մանրամասնութիւնների մէջ մտնել, բաւական է ասել, որ վեր-  
ջին քառորդ դարում բժշկականութիւնը մտել է մի նոր շրջանի  
մէջ և որ նա տեղ է բռնել միւս փորձնական գիտութիւնների  
շարքում: Զարմանալի չէ, որ այսքան կարճ ժամանակում նա  
դեռ չի կարողացել լուծել այն բոլոր պրոբլեմները, որ նրա առաջն  
է դնում ամենուրեք մարդկութիւնը: Ահա այս անկատարութիւ-  
նըն է, որ առիթ է տալիս խիստ քննադատութիւնների:

Այնուհետև Մեչնիկով առաջ է բերում բազմաթիւ քա-  
ղուածքներ, ինչպէս և Ռուսօփ, Տոլստոյի, և Բրունիտիերի կար-  
ծիքները գիտութեան անկարողութեան, նոյնիսկ նրա կատա-  
րեալ սնանկութեան մասին (Բրունիտիեր): Սրանցից ոմանք  
նոյնիսկ գտնում են գիտութիւնը ո՛չ միայն անկարող, անօ-  
գուտ, այլ և վնասակար, համաձայն Սողոմոն Իմաստունի ա-  
սածի, թէ՛ «ուր կայ գիտութեան ճոխութիւն, այնտեղ կայ նաև  
տրամուլթեան առատութիւն, և նա ով հարստանում է գիտու-  
թեամբ, աւելացնում է իր ցաւերը»:

«Այսքան հանձարեղ մարդկանց նման կարծիքները առաջ  
մարդ աւամայ ինքն իրան հարց է տալիս, ասում է Մեչնիկով,  
թէ շատ գիտնալը վնաս չի բերում արդեօք մարդկանց բաղ-  
դաւորութեանը: Եթէ գիտութիւնը միայն քանդում է բոլոր  
հաւատալիքները և մեզ սովորեցնում, որ կեանքը պիտի վեր-  
ջանայ դժբաղդութեան և ծերութեան գիտակցութեամբ, մարդ  
իրաւունք ունի հարցնելու, թէ աւելի լաւ չէր լինի կանգնեցնել  
գիտութիւնն իր աւերիչ ընթացքի մէջ: Գուցէ մարդկանց ձգ-  
տումը դէպի լոյս և գիտութիւն նոյնքան վնասակար է մարդ-  
կային սեւին, որքան թիթեռների ձգտումը դէպի մահացու  
կրակը»:

Բայց Մեչնիկով մի հաւատացեալ է, գիտութեան մի մո-  
լեռանդ առաքեալ: Պնդելով և օրինակներով հաստատելով (ինչ-  
պէս տեսանք) գիտութեան անպայման յառաջադիմութիւնը  
մարդկային ձակատագիրը հեշտացնելու ծանր գործում, նա  
անցնում է ծերութեանը, Ֆիզիկական՝ այս մահուան չափ ան-  
խուսափելի ֆենոմենին, որ այնքան վնասեցուցիչ արտաքին և  
այնքան տխուր խորհուրդ ունի: Գիտական մի տեսութիւնից յետոյ,

ուր նա պարզում է ձերութեան անատոմիական պատճառները, Մեչ-  
նիկով հնարաւոր է գտնում անգամ ձերութեան համար մի բան  
անել գիտութեան միջոցով. նրա կարծիքով մարդկային բնու-  
թեան աններգաշնակութեան պատճառով բնական մահ, ան-  
գամ խորին ձերութեան մէջ մեր ժամանակներում հազա-  
գիւտ է, քանի որ ձերերը մեռնում են համարեա միշտ մի որևէ  
հիւանդութիւնից, և այն յաճախ ծանր, լուրջ հիւանդութիւ-  
նից: Այս վերջին հանգամանքը նա համարում է խորապէս ան-  
բնական, ինչպէս և այն երկիւղը, որ համակում է ամեն հա-  
սակի մարդուն մահուան հանդէպ: Նա հաւատացած է, որ դը-  
բանք աւելի շուտ պետալոգիական, քան թէ ֆիզիկական երե-  
ւոյթներ են, և հետևապէս բժշկութիւնը վերջիվերջոյ պիտի յա-  
ջողեցնի թուլացնել կամ իսպառ ոչնչացնել:

«Որպիսի մեծ յառաջադիմութիւն կարող էր անել մարդկու-  
թիւնը, բացազանչում է նա, երկարակեցութեան տեսակէ-  
տից, եթէ նոյնիսկ միայն սիֆիլիսը ոչնչացնէր, որը բոլոր ժա-  
մանակից առաջ ձերութեան<sup>1</sup>/<sub>5</sub> է պատճառում: Ալկոհոլականու-  
թեան վերացումով վաղաժամ ձերութեան երկրորդ խոշոր  
պատճառը կը վերանար, և առաջ կը գար ապագայում աւելի  
երկարակեցութիւն: Ծերութեան գիտական ուսումնասիրութիւ-  
նը և նրա պատալոգիական բնաւորութիւնը փոխելու հնարնե-  
րը անշուշտ կը դարձնեն կեանքը աւելի երկար և աւելի եր-  
ջանիկ: Չը նայելով ժամանակակից գիտութեան անկատարե-  
լութեան, ոչ մի առիթ չը կայ այս մասին յոռետես կարծիքներ  
ունենալ»:

Աւելի մխիթարականն այն է, որ բնութեան մէջ նորմալ,  
բնական մահ գոյութիւն ունի իսկապէս, շատ կենդանիներ  
կան ստորին կատեգորիայի, որոնք մեռնում են բնական և  
ոչ պատալոգիական մահով, ինչպէս մարդը: Եւ Մեչնիկով չի  
տատանւում պնդելու, որ մարդու կեանքը գիտութեան միջո-  
ցով կարելի է հասցնել 100—120 տարի:

Սակայն ի՞նչ նշանակութիւն ունի մարդու երջանկութեան  
համար այդ մի քանի տարիների յաւելուածը, երբ մահն այնտեղ  
է այնուամենայնիւ, անխուսափելի և սարսափելի: Մեչնիկով  
պատասխանում է, որ այդ ճշմարիտ է, բայց տարիների հետ  
արտաքին տպաւորութիւնների վերաբերմամբ մեր գնահա-  
տութիւնը փոփոխւում է, 25 տարեկան և 50 տարեկան մար-  
դիկ միակերպ չեն դատում: Սորին և բնական ձերութիւնը շատ  
աւելի հանգիստ կը նայի մահուան, քան ներկայ անորմալ,  
հիւանդոտ և վաղաժամ ձերութիւնը:

Ահա այն օպտիմիստ փիլիսոփայութիւնը: Մարդը մի յանկարծական թռիչքով (որ բնութեան մէջ անսովոր չէ) ծագում է առել իրանից ստոր կանգնած կենդանական օրգանիզմից և իր հետ բերել է բազմաթիւ անկատար գծեր, որոնք և կազմում են նրա մարդկային բնութեան աններդաշնակութիւնը: Բանականութեան արագ զարգացման, կեանքի ստեղծած նոր պայմաններին, գոյութեան կուրի նոր հանգամանքներին բոլորովին անհամապատասխան այդ ժառանգութիւնը, մնացորդ է մարդկային ստորաստիճան ծաւալման և պատճառ է մարդկային ցեղի թշուառութեան մեծ մասի: Այդ աններդաշնակութեան շնորհիւ է, որ մենք գտնում ենք աշխարհը վատ, կեանքը՝ ցաւոտ, մեր ճակատագիրը՝ ծանր, մահը՝ վնասեցուցիչ: Այդ պատճառով է, որ մարդկային միտքը դարերից ի վեր սաւառնել է անհունները փնտրելով մի յենակէտ, մի կայան այս աշխարհից դուրս՝ մի լաւագոյն կեանքի իլլիզիան կառուցանելու: Եւ մեր անկարողութեան մէջ մերթ միտտիկ ենք, մերթ երագող, մերթ լացող, մելանխօլիկ և վերջիվերջոյ յոռետես, բայց միշտ էլ դժբաղդ: Բոլոր այդ ցաւագին ճիգերի մէջ իսկապէս մարդկային միտքը առանց ինքն իրան հաշիւ տալու հետամտել է գտնել այն ներդաշնակութիւնը մարդկային բնութեան և արտաքին երեւոյթներին, աշխարհի մէջ և տարբադղաբար նրա փնտրածը միշտ խուսափել է իրանից, որովհետեւ սխալ ճանապարհներ է ընտրել:

Այդ ներդաշնակութիւնը, որ կարող է մարդուն իր այնքան դարեր երազած երջանկութիւնը պարգևել, հնարաւոր է միմիայն մարդկային բնութիւնը աւելի լաւ, աւելի կատարեալ դարձնելով: Իսկ այդ հնարաւոր է գիտութեան միջոցով, որի առաջին քայլերը արդէն կարողացել են այնքան խորապէս բարերար հետք թողնել տառապող մարդկութեան կեանքում: Հիւանդութիւններ, վաղաժամ ծերութիւն, մահուան սարսափ, այս բոլորը արդիւնք են մեր օրգանիզմի վատ կազմութեան և մեծապէս ենթակայ են գիտութեան բարերար ազդեցութեանը: Երբ մարդկային բնութեան այս աններդաշնակութիւնը կ'անհետանայ, երբ նրա օրգանիզմի պատալոգիական բազմաթիւ երեւոյթները տեղի կը տան զուտ ֆիզիօլոգիական նորմալ՝ երեւոյթների, մեր հոգին ձեռք կը բերի այն գերագոյն ներդաշնակութիւնն ու խաղաղութիւնը, որը անհրաժեշտ է իսկական երջանկութեան համար: Եւ այն ժամանակ ըստ Մեչնիկովի կեանքը չի թւայ մեզ ցաւերով լի, մեր ճակատագիրը՝ սև, և մահը այնքան սարսափելի,

Եւ սակայն բոլոր պրոբլեմների պրոբլեմը այնուամենայն-

նիւ մնում է անլուծելի, կ'ասի ընթերցողը գիտնական հեղինակի այս օպորթիստ փիլիսոփայութեան ի պատասխան: Եւ նրա դատողութիւնը շատ հասկանալի է և շատ արամարանական:

Այսպէս՝ նա կ'ասի.

Հաւատանք, որ գիտութիւնը վերջիվերջոյ կը յաղթանակի և որ մեր մարմնական բազմաթիւ ցաւերին վերջ կը տայ. ընդունենք, որ մեր օրգանիզմի անկատարութիւնները շտկելով՝ նա մեզ հնարաւորութիւն կը տայ աւելի երջանիկ ապրել. ընդունենք, որ մեր բնութեան փոփոխութիւնով մեր հասարակական կեանքից էլ բազմաթիւ անախորժ, վրդովեցուցիչ երեւոյթներ կ'անհետանան, մարդկանց մէջ էլ կ'իշխի ներդաշնակութիւն ու խղաղագութիւն, կեանքը կը հալուի մեղրի պէս, ծերութիւնը նուազ նողկալի և նուազ վհատեցուցիչ կը դառնայ: Այս բոլորը ընդունենք, որովհետև գիտութիւնը գուցէ կարողանայ տալ մեզ: Իսկ մի՞հր... չէ՞ այս բոլորից յետոյ այնուամենայնիւ պէտք է մեռնել:

Երջանիկ ապրել՝ չ'իմանալով ինչո՞ւ համար, և մեռնել՝ չ'իմանալով դարձեալ ինչո՞ւ համար—այս բանը բաւական է, որ մարդկանց մէջ յոռետեսներ միշտ լինին: Կեանքի ծարաւը՝ ծարաւներից ամենաանյագէնալին է և վեհագոյնը: Բոլոր ակտոսանքները, բոլոր արտունջները, բոլոր ըմբոստութիւնները բնութեան դէմ կապուած են այդ այրող, տոչորող ծարաւի զգացմունքին, որ երբէք չի մարում: Որչափ գեղեցիկ, որչափ երջանիկ լինի կեանքը, նա այնքան աւելի խորապէս պիտի կապի իր հետ կենդանի արարածներին և այնքան աւելի ծանր պիտի դարձնի անդառնալի հրաժեշտի ժամը:

Եւ այդ ժամին մարդը միշտ կը կրկնի խեղդող, ճակատագրական հարցերը, որոնք անթիւ դարերից իվեր կախուած են մարդկութեան շրթունքներից՝

Ինչո՞ւ ապրեցի՝ թէկուզ երջանիկ,

Ինչո՞ւ եմ մեռնում:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ